ՈՐՈՇՈՒՄ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 18 հունիսի 2007 թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը
Նախագահությամբ՝ Ռ.Պապայանի
Անդամակցությամբ՝ Վ.Հովհաննիսյանի
Հ.Դանիելյանի

Քննության առնելով ՀՀ քաղաքացի Ռուզաննա Մանուկյանի դիմումի ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ

1. Քաղ. Ռուզաննա Մանուկյանը դիմել է Սահմանադրական դատարան, վիճարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2 հոդվածի 1-ին մասի եւ 407 հոդվածի 4-րդ մասի սահմանադրականությունը:

2. Նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2 հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերի սահմանադրականության վերաբերյալ առկա է ՀՀ Սահմանադրական դատարանի 2007 թ. ապրիլի 11-ի ՍԴՈ-691 որոշումը, անհրաժեշտ է, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 3-րդ կետի դրույթները, Ռուզաննա Մանուկյանի դիմումի քննության ընդունումը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2 հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերի մասով մերժել:

3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքքի 407 հոդվածի 4-րդ մասի եւ 414.2 հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 4-րդ կետերի մասով ներկայացված դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6 կետի, Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1, 2, 4, 5 կետերի, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրական դատարանի Կանոնակարգի պահանջներին: Պահպանվել է Սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը:

Դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ գտնում է, որ իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրությանը:

Գործում առկա է պետական տուրքի վճարումից ազատելու միջնորդությունը:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 69 հոդվածի 6-րդ կետով, Սահմանադարական դատարանի 1-ին դատական կազմը

ՈՐՈՇԵՑ

1. Ռ. Մանուկյանի դիմումի քննության ընդունումը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքքի 414.2 հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերի մասով մերժել:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407 հոդվածի 4-րդ մասի եւ 414.2 հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 4-րդ կետերի մասով Ռ. Մանուկյանի դիմումն ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող ճանաչել ՀՀ Ազգային ժողովին:

3. Ռ. Մանուկյանին ազատել պետական տուրքի վճարումից, նկատի ունալով, որ նա չի աշխատում եւ գտնվում է սոցիալապես անապահով վիճակում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՐՏՈՒՂԵՐ ՐՈՒԹՅՈՒՆ